

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ***

ՆԱԻՐԱ ՄԿՐՏՅԱՆ

Թեև ԽՍՀՄ փլուզումից քիչ ժամանակ չի անցել, այնուամենայնիվ համակարգային բարեփոխումների, այսինքն՝ խորքային փոփոխությունների օրակարգը եղել է մնում է հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթի կենտրոնական թեմաներից մեկը, որի գաղափարաբանական շրջանակն առավելապես ազատական-ժողովրդավարական է: Ձ. Ռոլսի արդարության՝ որպես անաչառության տեսության մեջ այդ շրջանակը ամուր հողավորում է սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների գաղափարները, որոնք ներկայացված են և առավել կամ պակաս չափով հաղորդակցված հայաստանյան հանրության շրջանում: Այդ տեսության դիտանկյունից՝ առնվազն վերջին շրջանի հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում վերոնշյալ քաղաքական արժեքներն ու գաղափարները իրենց փոխառնչության և հողավորման մեջ առավելապես մասնատված, տրոհված են:

***Բանալի բառեր** – սոցիալական արդարություն, մարդու հիմնարար իրավունքներ, հանրային-քաղաքական խոսույթ, խորքային փոփոխություններ, հասարակական-պետական կերտվածք, գաղափարաբանական շրջանակ, ազատական ժողովրդավարություն, համակարգային բարեփոխումների օրակարգ*

Ներածություն

Խորքային փոփոխությունների շրջան թևակոխած հասարակության կամ երկրի համար գլխավոր հարցը թերևս այն է, թե իր հիմնական կողմերով ու գծերով ի վերջո ինչպիսին պիտի լինի կամ դառնա նրա կերտվածքը: Ինչպիսի՞ն պիտի լինեն հասարակական այն հաստատությունները, դրանց հիմքում ընկած սկզբունքները, կառուցակարգերն ու պրակտիկաները, որոնք ի հայտ կգան այդ կերտվածքի սահմաններում: Այս հարցերն ուղղակիորեն առնչություն ունեն վերջինիս նախագծման ու իրականացման, ինչպես նաև այն արժեքների հետ, որոնք մի կողմից պիտի առարկայանան դրանում, մյուս կողմից կողմնորոշեն ինչ-որ առումով սոցիալական ինժեներիայի այդ ողջ ընթացքը: Այս ա-

* Հոդվածը հիմնված է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության «Քաղաքականության հետազոտություն» ծրագրի շրջանակում տրվող դրամաշնորհի միջոցով 2019-2020 թվականներին «Մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում» թեմայով իրականացված հետազոտության վրա:

ռումով ԽՄԶՄ փլուզումից հետո երևան եկած երկրների ու հասարակությունների փորձառությունները վերջին տասնամյակների ամենաուշագրավ օրինակներն են: Իսկ սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների՝ որպես առանցքային քաղաքական արժեքների հողավորումն այդ փորձառությունները տեղակայում է արդիականացմանը բնորոշ, խորհրդային և հետխորհրդային, տեղական և միջազգային-համաշխարհային չափումների միջև առկա լարումների մեջ և էլ ավելի սաստկացնում դրանց հանդեպ հետազոտական ուշադրությունը:

Համակարգային բարեփոխումների օրակարգը և նրա գաղափարաբանական շրջանակը

ԽՄԶՄ փլուզումից և Երրորդ հանրապետության հիմնադրումից ի վեր Հայաստանում պետական իշխանության հավակնող և իշխանության եկած բոլոր ուժերն անխտիր հռչակել են համակարգային բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Վերջինս առերևույթ նշանակել ու այսօր էլ շարունակում է նշանակել, որ *ամենատարբեր (տնտեսության, քաղաքականության, սոցիալական պաշտպանության, արդարադատության, կրթության ու առողջապահության և այլն) ուղղությունում փաստացի հասարակական կյանքը կազմակերպող և գործող սկզբունքները, կառուցակարգերը, դրանց սահմաններում ի հայտ եկող պրակտիկաները, ըստ էության, անընդունելի են և ոչ կենսունակ¹*: Բացի վերոհիշյալից՝ այդ հայտարարությունները որպես կանոն այն մասին էին, որ *Հայաստանին անհրաժեշտ են համակարգային այնպիսի բարեփոխումներ, որոնք բնույթով ազատական ու ժողովրդավարական են²*: Ընդ որում՝ ասվածը կապ չունի այն բանի հետ՝ անկեղծ են եղել հայտարարությունները, բավարար է եղել քաղաքական կամքը՝ փոփոխությունները կյանքի կոչելու, իսկ որդեգրված քաղաքականություններն ու գործողություններն արդյունավետ են, թե՛ ոչ և այլն: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ առնվազն վերջին երեք տասնամյակներին (մի կողմ թողնելով ԽՄԶՄ վերջին տարիների գորբաչոյան վերակառուցման փորձերը) **խորքային փոփոխություններ իրականացնելու օրակարգը** եղել և մնում է հայաստանյան հանրային-քաղաքական

¹ Այս համատեքստում «ոչ կենսունակ» ասելով պիտի հասկանալ որպես հայաստանյան հանրության ապագան հարցականի տակ դնող:

² Տե՛ս «Հայոց համազգային շարժում» կուսակցության ծրագիր, 2007», առցանց՝ http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=81&Itemid=67, այց՝ 03.02.2020, «Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագիր, 2013», առցանց՝ http://www.anc.am/?page_id=1024, այց՝ 03.02.2020, «ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր, 2013», առցանց՝ [http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20\(1\).pdf](http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20(1).pdf), այց՝ 03.02.2020, «Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագիր», առցանց՝ <http://hhk.am/hy/program/>, այց՝ 03.02.2020: Սկզբնական ժամանակաշրջանի մասին տե՛ս **Astghik Mirzakhanyan**, Economic and Social Development, in: The Armenians: Past and Present in the Making of National Identity, edited by Edmund Herzig and Marina Kurkchian, London: Routledge, 2005, էջ 198-210: Արժեքավոր է նաև դիտարկել **Armine Ishkhanian**, Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia, London: Routledge, 2008:

խոսույթի կենտրոնական թեմաներից մեկը: Բոլոր այն քաղաքական դերակատարները, որոնք ձգտել են իրենց ձայնը լսելի կամ ազդեցիկ դարձնել հանրային-քաղաքական խոսույթում, փորձել են հանդես գալ նախ և առաջ նման օրակարգով:

Ինչ վերաբերում է այն իրականացնելու գաղափարաբանական շրջանակին, ապա, դատելով նախընտրական փուլերում հնչած հայտարարություններից ու առաջադրված ծրագրերից, այն մի զգալի մասով, եթե ոչ հիմնականում, **ազատական-ժողովրդավարական** է: Գործնականում վերջին երեսուն տարում ձեռնարկվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտները շոշափող ազատական ու ժողովրդավարական բնույթի օրենսդրական, կառուցվածքային, գործառույթային փոփոխություններ: Սակայն միշտ չէ, որ դրանց համապատասխանել են առկա հասարակական պրակտիկաները, իսկ վերջնարդյունքները հասարակական տարբեր խմբերի ու շերտերի շրջանում պարբերաբար առաջացրել են դժգոհություն: Այս համատեքստում հանրային-քաղաքական խոսույթին մասնակից ազդեցիկ կամ ազդեցիկության ձգտող դերակատարները պարբերաբար առերեսվել են առնվազն մեկ առանցքային խնդրի, այն է՝ *խորքային փոփոխությունների օրակարգի տեսանկյունից ձևակերպել հասարակական նշանակության առկա խնդիրները՝ շրջանառելով ու հաղորդակցելով որոշակի արժեքներ:*

Ահա այս համատեքստում քաղաքական այնպիսի արժեքներ ու գաղափարներ, ինչպիսիք **սոցիալական արդարությունն** ու **մարդու հիմնարար իրավունքներն** են, հատկապես նրանց հարաբերումն ու հոդավորումը, առանձնահատուկ կարևորություն են ստանում, քանի որ առանցքային քաղաքական արժեքներ են և հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում մեծապես օժանդակել են հասարակական նշանակության խնդիրներ ձևակերպելուն: Ավելին՝ հենց վերոնշյալ ազատական-ժողովրդավարական գաղափարաբանությունն է թույլ տալիս այդ արժեքների ամուր հողավորումը:

Մարդու (հիմնարար) իրավունքների և սոցիալական արդարության գաղափարները

Մարդու (հիմնարար) իրավունքների և սոցիալական արդարության գաղափարները, դրանց տիրույթում քննարկվող խնդիրներն ու հարցերը բնականաբար նոր չեն. ակունքները գալիս են Հին աշխարհից: Սակայն դրանց խիստ կարևորությունն ու հատկապես հողավորումը վերջերս ի հայտ եկած իրողություններ են:

Մարդու (հիմնարար) իրավունքների գաղափարը, գործնականում դրա իրացումն ապահովելու անհրաժեշտությունը լայնորեն շրջանառվել և ներպետական, միջազգային ու համաշխարհային մակարդակի քաղաքական գերակայություն են դարձել Երկրորդ համաշխարհային

պատերազմից հետո³: 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ մարդու (հիմնարար) իրավունքների լեզուն այն հիմնական գործիքն է, որով ողջ աշխարհում «խոսում են» ներհասարակական, միջազգային խնդիրները քննարկելիս: Մա ամեննին չի նշանակում, որ գործնականում մարդու (հիմնարար) իրավունքների (որոշ դեպքերում նաև՝ զանգվածային) ոտնահարումներ չկան: Ավելին՝ ամենատարբեր փաստարկներով քիչ չեն նաև մարդու (հիմնարար) իրավունքների, դրանց ապահովման ու իրացման հնարավորությունների նկատմամբ սկեպտիկական մոտեցումները⁴ ընդհուպ այդ լեզվի՝ որպես ինչ-որ առումով պարտադրված գործիքի վերաբերյալ հնչող քննադատությունը⁵:

Այդ գաղափարի շուրջ դոկտրինալ բանավեճերում ուրվագծվում է երկու հիմնական մոտեցում՝ բնապաշտական (naturalistic) և համաձայնական (agreement): Այսպես՝ բնապաշտական մոտեցմանը հարող ուսմունքներում մարդու իրավունքները նրանք են, որոնք ունեն բոլոր ժամանակներում ու բոլոր վայրերում ապրող բոլոր մարդիկ իրենց մարդկային բնույթի շնորհիվ⁶: Համաձայնական մոտեցումը հակված է պնդելու, որ մարդու իրավունքները չափօրինակներ են, որոնց շուրջ համաձայնում են բարոյական ու քաղաքական տարբեր արժեքներ կրող մարդիկ, կամ այլ կերպ ասած՝ դրանք միջմշակութային համաձայնության արդյունք են⁷: Այս միտումների լավագույն դրսևորում կարելի է համարել ՄԱԿ-ում 1948 թվականին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», որում կարելի է հանդիպել այսպիսի ամրագրումների.

• «[...] Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է»⁸:

• «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»⁹:

Մարդու իրավունքի գաղափարն ինքնին ուղիղ աղերս ունի յու-

³ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականին, առցանց <https://www.un.org/press/docs/1948/19480101 UDHR-booklet-Armenian-version.pdf>, այց 19.01.2020, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան» ընդունվել է 1950 թվականին, առցանց https://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf, այց 19.01.2020, «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր» ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին, առցանց <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500>, այց 18.01.2020: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Charles Beitz**, *The Idea of Human Rights*, Oxford: Oxford University Press, 2009:

⁴ Տե՛ս **Charles Beitz**, նշվ. աշխ., էջ 3–6:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 201–202:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 49:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 73–73:

⁸ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», էջ 6:

⁹ Նույն տեղում, էջ 8:

րաքանչյուր մարդու անհատականության, եզակիության, գործորդ (agent) լինելու և հասարակական հարաբերություններում ազդեցություն բանեցնելու կարողության շեշտադրման հետ:

Ինչ վերաբերում է սոցիալական արդարությանը, ապա, ինչպես հետազոտողներն են նշում, սոցիալական արդարությունը «մոդայիկ բառ» է դարձել 20-րդ դարի 70-ական թվականներին¹⁰, սակայն սկզբի համար ոչ այնքան համաշխարհային հարթության, որքան ներհասարակական խնդիրների արծարծման համատեքստում: Այդ պատճառով այդ շրջանից սկսած ասպարեզ է իջել սոցիալական արդարության վերաբերյալ տեսությունների մի ողջ փունջ, որն արձագանքում է հրնթացս ծավալվող իրադարձություններին ու գործնական խնդիրներին և ի ցույց դնում գաղափարական ինքնատիպ զուգորդումներ ու մեկնաբանություններ, ծնունդ առնում և հղկվում բանավեճերի մեջ¹¹: Սոցիալական արդարության շուրջ իրենց մտորումների ու բանավեճերի ժամանակ փորձում են պարզել՝ *ա) ինչպե՞ս են փոխհարաբերվում անձն ու հասարակությունը, բ) ինքնին իրավունքի իրացումը նպատակ է (Ջ. Ռոլս), թե՞ միջոց՝ հասնելու բարիքին (Մ. Սենդել)*¹², *գ) թույլատրելի՞ է զոհաբերել քչերի ազատությունը հանուն մեծամասնության բարօրության (ուտիլիտարիզմ), թե՞ ոչ (Ջ. Ռոլս), դ) պետության իրավասությունը բացառապես մարդկանց բռնությունից, գողությունից ու խաբեությունից պաշտպանելն է (Ռ. Նոզիք)*¹³, *թե՞ առնվազն սոցիալ-տնտեսական նվազագույն երաշխիքներ տրամադրելը (Ջ. Ռոլս, Ռ. Դվորկին)*¹⁴, *սոցիալիզմ/մարքսիզմ, ե) բովանդակային առումով սոցիալական արդարության սկզբունքները վերպատմական են (Ջ. Ռոլս), թե՞ ազուցված տեղային համատեքստին ու արժեքներին (Մ. Ուոլգեր)*¹⁵ և այլն:

Այս և այլ հարցեր ձևավորել են այն շրջագիծը, որում ոչ միայն սոցիալական արդարության, այլև մարդու իրավունքների և հատկապես մարդու հիմնարար իրավունքների գաղափարները բնականաբար հայտնվել են սերտ փոխառչնության տիրույթում և արդեն իսկ 20-րդ դարի 70-ական թվականներից ձևավորել նորմատիվ շրջանակ, որը կարող է ծառայել *գործող հասարակական կառուցակարգերի, սկզբունքների, պրակտիկաների* սոցիալ-քաղաքական քննադատությամբ:

¹⁰ Տե՛ս **Will Kymlicka**, Contemporary Political Philosophy: An Introduction, Oxford: Oxford University Press, 2002, էջ ix:

¹¹ Այս մասին համապարփակ ներկայացված է Ուիլ Կիմլիկայի գրքում, տե՛ս **Will Kymlicka**, նշվ. աշխ., էջ ix:

¹² Տե՛ս **Michael Sandel**, Liberalism and the Limits of Justice, Cambridge: Cambridge University Press, 1998:

¹³ Տե՛ս **Robert Nozick**, Anarchy, State and Utopia, Oxford: Blackwell, 1999:

¹⁴ Տե՛ս **Ronald Dworkin**, Sovereign Virtue: The Theory and Practice of Equality, Cambridge (Mass): Harvard University Press, 2002:

¹⁵ Տե՛ս **Michael Walzer**, Spheres of Justice: A Defense of Pluralism and Equality, New York: Basic Books, 1983:

յան, փոփոխության և արդիականացման հենք: Ուստի տեղին է տեսական առումով քննել սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն ու հողավորումը:

Ձ. Ռոլսի արդարության՝ որպես անաչառության տեսությունը

Սոցիալական արդարության և նրան սերտորեն հողավորված մարդու հիմնարար իրավունքների մասին ամենաազդեցիկ ուսմունքը 20-րդ դարի ամերիկացի փիլիսոփա Ջոն Ռոլսի արդարության տեսությունն է: Նա բանաձևել է արդարությունը որպես անաչառություն: Անկախ այդ տեսության հասցեին հնչած տարաբնույթ քննադատություններից, այն, նաև որպես ազատական-ժողովրդավարական մոդելի ջատագովություն¹⁶, խիստ վճռական դեր է խաղացել մի կողմից սոցիալական արդարության նորովի թեմականացման, դրանում մարդու հիմնարար իրավունքները առանցքում տեղակայելու, մյուս կողմից՝ հասարակական-պետական կերտվածքում հասարակական հաստատությունների խաղացած առանցքային դերակատարությունը շեշտադրելու գործում: Ամերիկացի փիլիսոփան հայտարարում է, որ արդարությունը հասարակական հաստատությունների առաջնային առաքիճությունն է, իսկ նրա գլխավոր առարկան՝ հասարակության հիմնական կառուցվածքը: Ավելի ճշգրիտ՝ արդարության առարկան այն եղանակն է, որով առանցքային հասարակական հաստատությունները բաշխում են հիմնարար իրավունքներն ու պարտականությունները և որոշադրում հասարակական համագործակցությունից բխող շահավետությունների բաժանումը¹⁷: Հավելյալ ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս մոտեցմամբ կարելի է եզրակացնել իրավունքների ու պարտականությունների բաշխման հարցում կամայականությունները, հասարակական համագործակցությունից ծնունդ առնող օգուտների ու բեռների ոչ հավասարաչափ բաշխումը անարդար են: Երբ Ջ. Ռոլսը մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը դարձնում է արդար հասարակության բնութագիրը և ձևակերպում է սոցիալական արդարության իր սկզբունքները, ապա առաջնային նշանակություն է տալիս մի սկզբունքի, ըստ որի՝ *«Յուրաքանչյուր անձ պիտի ունենա առավելագույն ընդգրկման հավասար հիմնարար ազատությունների համակարգի հավասար իրավունք՝ համատեղելի բոլորի համար ազատության համանման համակարգի հետ»*¹⁸:

Մարդու հիմնարար իրավունքների առաջնայնությունն է՛լ ավելի է ընդգծվում, երբ նա պնդում է. «[...] կարևոր չէ, թե որքանով են արդյու-

¹⁶ Այս մասին մանրամասն տե՛ս **Chantal Mouffe**, *The Democratic Paradox*, Verso: New York/ London, 2000:

¹⁷ Տե՛ս **John Rawls**, *A Theory of Justice*, The Belknap Press of Harvard University Press: Cambridge/ Massachusetts, 2005, էջ 3–7:

¹⁸ Նույն տեղում, էջ 302:

նավետ և ճարտարակերտ օրենքներն ու հաստատությունները, դրանք պետք է բարեփոխվեն կամ վերացվեն, եթե անարդար են: [...] Արդար հասարակության մեջ հավասար քաղաքացիության ազատությունները համարվում են պայմանադրված (settled). արդարությամբ երաշխավորված իրավունքները քաղաքական սակարկման կամ հասարակության շահերի հաշվարկման ենթակա չեն»¹⁹: Սա նշանակում է, որ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, իսկ դրանք, ըստ Ջ. Ռոլսի, հետևյալն են՝ *ընտրական, պաշտոն գրավելու, խոսքի և հավաքների, խղճի, մտքի, անձի ազատության, հանիրավի կալանման ու բանտարկության չենթարկվելու, մասնավոր սեփականություն ունենալու*²⁰, չեն կարող զոհաբերվել հանուն որևէ մեկի կամ խմբային շահերի, ոչ էլ իրավունք ունեցողի հետ «գործարքի» առարկա դառնալ:

Կարևոր է հասկանալ նաև, որ այս դեպքում «սոցիալական արդարություն» եզրը նույնական չէ նեղ իմաստով նյութատնտեսական, սոցիալական ապահովության կամ դրամական տեսքով որոշակի եկամուտի ընդունելի չափ հատկացնելու հետ: Վերջինս, կոպիտ ասած, ռոլսյան սոցիալական արդարության ըմբռնման մյուս կողմն է, որն արտացոլված է սոցիալական արդարության նրա երկրորդ սկզբունքում. *«Սոցիալական և տնտեսական անհավասարությունները պիտի կազմակերպված լինեն այնպես, որ առավելագույնս լինեն և՛ պակաս հաջողակների օգտին՝ համատեղելի արդար խնայողությունների սկզբունքի հետ, և՛ կցված՝ բոլորի համար բաց դիրքերին ու պաշտոններին հնարավորության անաչառ հավասարության պայմաններում»*²¹:

Սոցիալական արդարության այս երկու սկզբունքները մյուս ձևակերպումների հետ ցույց են տալիս, որ «սոցիալական արդարություն» հասկացությունը այս ուսմունքի դեպքում վերաբերում է հասարակությանն իր հաստատութենական կազմակերպման ամբողջության մեջ: Հետևաբար այն հիմնական գործող հաստատությունները բնութագրող համապարփակ հասկացություն է բաշխման կողմի շեշտադրմամբ, որտեղ մարդու հիմնարար իրավունքները, ի մասնավորի՝ դրանց բաշխումն ու անսակարկելիությունը դառնում են հասարակական-պետական կերտվածքի հիմնականախքը՝ թույլ տալով հաջորդիվ սոցիալ-տնտեսական բաղադրիչների միավորումը: Սրանով Ջ. Ռոլսը առաջադրում է ամենաընդհանրական իմաստով արդարության իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական կողմերի փոխկապվածությունը, եթե անգամ իրավաքաղաքականին առաջնայնության կարգավիճակ է շնորհված²²:

¹⁹ Նույն տեղում, էջ 3–4:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 61:

²¹ John Rawls, նշվ. աշխ., էջ 302:

²² Ջ. Ռոլսի արդարության տեսության մասին առավել հանգամանալից տե՛ս Thomas Pogge, John Rawls: His Life and Theory of Justice, Oxford, Oxford University Press, 2007:

Սոցիալական արդարության ու մարդու հիմնարար իրավունքների հողավորումը հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում

Թեև քաղաքական արժեքների, հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում դրանց հողավորման վերաբերյալ հետազոտությունները սակավ են, այնուամենայնիվ դրանք ցույց են տալիս, որ (սոցիալական) արդարությունը և մարդու հիմնարար իրավունքները, անկախ իրենց մեկնաբանություններից, որպես արժեքներ ներկայացված են և ավել կամ պակաս չափով հաղորդակցված հայաստանյան հանրության տարբեր շրջանակներում (չափահասներ/երեխաներ, կանայք/տղամարդիկ, պետական ծառայողներ/քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ)²³: Ընդ որում՝ սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների, դրանց հարաբերման թեմաները մեզանում էականորեն առնչվում են հենց խորքային փոփոխությունների օրակարգին²⁴:

Մյուս կողմից՝ Հայաստանում և ենթադրաբար հետխորհրդային տարածքի մի շարք երկրներում խորհրդային անցյալի ազդեցությամբ հանրային պատկերացումներում *մարդու հիմնարար՝ ընտրության, պաշտոն գրավելու, կյանքի, մտքի, խղճի, կրոնի ազատության, արտահայտվելու, հավաքների և միավորման ազատության, ազատության և անձնական անձեռնմխելիության, ազատ տեղաշարժման, արդար դատաքննության, օրենքի առջև հավասարության իրավունքների, խոշտանգումների ու խտրականության արգելքների*²⁵ իրացումն ու պաշտպանությունը հիմնականում չեն ընկալվել որպես սոցիալական արդարության վկայություն: Խորհրդային Միությունից ժառանգված իներցիայով (սոցիալական) արդարությունը, իհարկե ոչ բացահայտորեն, նույնացվում է նյութական բարիքների ու որոշակի հիմնականում կրթա-

²³ Տե՛ս Անահիտ Միմոնյան, Հայկ Սմբատյան, Միշա Թադևոսյան, Սոֆյա Մանուկյան, Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ / «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, 2018; Անահիտ Միմոնյան, Գոռ Հակոբյան, Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքականություն Հայաստանում, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ, 2019; Արթուր Մկրտիչյան, Հարություն Վերսիշյան, Սոնա Բալասանյան, Անկախության սերունդ. Հետազոտություն Երիտասարդների շրջանում. Հայաստան 2016, Եր.: «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հայկական մասնաճյուղ, 2016; Նարինե Խաչատրյան, Սոնա Մանուկյան, Աստղիկ Մերոբյան, Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մշակույթ, Արժեքներ, Համոզումներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում, Եր., 2014:

²⁴ Տե՛ս ««Բմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր», Հետք, առցանց՝ <https://hetq.am/static/content/pdf/My%20step.pdf>, այց՝ 22.01.2020, «ԲՈ նախընտրական ծրագիր», առցանց՝ <http://www.sdp.am/%D6%84%D5%B8-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/>, այց՝ 22.01.2020, «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագիր, առցանց՝ <https://www.brightarmenia.am/am/54/1543/lusavor-hayastan-kusakutyanyan-azh-nakhyntrakan-tsragir.htm>, այց՝ 22.01.2020:

²⁵ Մարդու հիմնարար իրավունքների այս թվարկումը առավելապես հետևում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի» և «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» բովանդակությանը:

կան ու առողջապահական ծառայությունների բաշխման (կամ ուղղակի տրամադրման) հետ: Դրանում էական դերակատար է համարվում պետությունը, իսկ ազդեցիկ՝ պետական քաղաքականությունները:

Ինչպես հետխորհրդային որոշ երկրների, այդ թվում՝ նաև հետխորհրդային Հայաստանի պրակտիկան ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում այդ իրավունքները կարող են «գոհաբերվել» կամ դառնալ «գործարքի» առարկա (օրինակ՝ թե՛ հանրապետական, թե՛ տեղական նշանակության ընտրությունների ժամանակ ընտրակաշառքը և այլն): Դա այն դեպքում, երբ «դրանք մեզ թույլ են տալիս առավել չափով վերահսկել մեր կյանքին վերաբերող գլխավոր ծրագրերը և այդպիսով մեզ ավելի շատ ինքնորոշում են պարզում»²⁶: Իսկ այդ իրավունքների ոտնահարումն իր հերթին կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական ծանր կացության²⁷:

Միաժամանակ վերոնշյալ այս արժեքներից առնվազն մի մասի, եթե ոչ բոլորի ամփոփ արտացոլումը կարելի է գտնել նաև ՀՀ Սահմանադրության երրորդ՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» հոդվածի առաջին կետում. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»²⁸: Մա արդեն վկայում է, որ երկրի բարձրագույն օրենքի մակարդակում որոշակիորեն ամրագրված են դիտարկվող արժեքները: Վերջին շրջանում իրականացված ու արդեն վկայակոչված հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ, իհարկե, մեզանում (սոցիալական) արդարության մասին մեկ ընդհանուր պատկերացում գոյություն չունի, սակայն դրանք հիմնականում հյուսվում են գաղափարական երկու առանցքի շուրջ.

➤ **Իրավունքի/օրենքի** հետ ասոցացվող՝ իրավունք, իրավահավասարություն, օրենքների պահպանում, մարդու իրավունքների պաշտպանություն, խոսքի իրավունք, խոսքի ազատություն, օրենքի գերակայություն, արդար վճիռ՝ ճիշտ և ուղղորդող, արդարադատություն, իրավունքների և պարտականությունների իմացություն:

➤ **Հավասարության հղացքի** հետ ասոցացվող՝ հավասարություն, հավասար հնարավորություններ, մրցակցային հավասար պայմաններ, հավասար նվազագույն կենսապայմաններ, խտրականության բացա-

²⁶ Will Kymlicka, նշվ. աշխ., էջ 144:

²⁷ Մարդու իրավունքների իրացման արգելքների և աղքատության միջև երկկողմանի կապի մասին տե՛ս **Անահիտ Միմոնյան, Գոռ Հակոբյան**, նշվ. աշխ.: Խնդրին վերաբերող ուշագրավ հոդված է՝ **Ադասի Թադևոսյան**, Անհավասարության դիսկուրսը և աղքատության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանում, Հայաստան 2018. Իրողություններ և հեռանկարներ, «Հումանիտար հետազոտություններ հայկական կենտրոն», 2019, էջ 154–163:

²⁸ ՀՀ Սահմանադրություն, առցանց՝ <https://www.president.am/hy/constitution-2015/>, այց՝ 23.02.2020:

կայություն, ուժի հավասարություն²⁹:

Երկուսն էլ Ջ. Ռուլսի սոցիալական արդարության երկու սկզբունքների բովանդակությանն ուղղակի լծորդված են, ինչը ցույց է տալիս, որ ազատական-ժողովրդավարական ծիրում ձևակերպված սոցիալական արդարության այս հայեցակարգը հայաստանյան հանրային պատկերացումներում առկա է: Սակայն երբ դիտարկում ենք բաղադրիչների տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ այն մասնատված է, բեկված կամ ցրված է հանրային պատկերացումների ողջ սպեկտրով: Ավելին՝ իրավաբաղադրական ու սոցիալ-տնտեսական կողմերի միջև անհրաժեշտ կապը թույլ է կամ բացակայում է:

Ոչ պակաս ուշագրավ միտումներ են ի հայտ գալիս որոշ պաշտոնական փաստաթղթեր, հրապարակային ելույթներ, քաղաքական-հրապարակային գործիչների ՋԼՄ-ներին տված հարցազրույցներ ու կուսակցական, նախընտրական ծրագրեր քննելիս: Մասնավորապես՝ վերջին տարիների հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարության ու մարդու հիմնարար իրավունքների հոդավորման տեսանկյունից իրականում թեմականացվել են մի շարք իրողություններ, որոնք վերաբերում են անցյալին, այսպես կոչված՝ հենց անմիջապես հետխորհրդային շրջանին: Բայց դրանք հիմնականում դուրս են մնացել սոցիալական արդարության վերոհիշյալ շրջանակի, հետևաբար սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման մեջ ձևակերպվելուց³⁰: Վերոշարադրյալը թույլ

²⁹ Տե՛ս **Անահիտ Միմոնյան, Հայկ Սմբատյան, Միշա Թաղևոսյան, Սոֆյա Մանուկյան**, նշվ. աշխ.:

³⁰ Այդ իրողությունների շարքում են, օրինակ՝ հանրադրությունաբերության ոլորտի խնդիրները, 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունները, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նախագիծն ու դրա ընդունումը, խաղաղ պայմաններում գոհված զինծառայողների, քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչների կողմից նախորդ վարչակարգին իրավաբաղադրական գնահատական տալու և դրա հետեւանքները շտկելուն ուղղված ռազմավարությունների ու մեխանիզմների մշակումը և այլն, տե՛ս «ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Մարտի 1-ի կապակցությամբ», 1 մարտի, 2019, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ, արցանց <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/03/01/Nikol-Pashinyan-Message/>, այց 19.01.2020, «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում», 26 սեպտեմբերի, 2019, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ, 2019, արցանց <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/09/26/Nikol-Pashinyan-74th-session-of-UN-General-Assembly/>, այց 19.01.2020, ««Հեղափոխությունն ստեղծել է մի միջավայր, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, և նրա իրավունքների պաշտպանությունը կառավարության առաջնային խնդիրն է» վարչապետը մասնակցել է ՄԻՊ հաստատության գործունեության 15-ամյակի համաժողովին», Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ, 26 նոյեմբերի, 2019, արցանց <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/11/26/Nikol-Pashinyan-Ombuds-15/>, այց 02.02.2020, «ՀՀ Կառավարության 2019–2023 թվականների ծրագիր», 25, «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն», <http://e-rights.am/>, այց 19.01.2020, 9: «Փաշինյանը հռչակագրի նախագիծ է հրապարակում», «Ազատություն», 11 մարտի, 2020, արցանց <https://www.azatutyun.am/a/30481268.html>, այց 13.03.2020, «Հարկավոր է անվանական մատնանշել բոլոր այդ հանցագործությունների գլխավոր դերակատարներին. Լևոն Բարսեղյանը՝ վարչապետի հրապարակած հռչակագրի մասին», «factor.am», 11 մարտի, 2020, արցանց <https://factor.am/228866.html>, այց 13.03.2020:

է տալիս հաստատել, որ դիտարկվող ժամանակահատվածում հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում շրջանառվում է մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների, արտոնյալության/խտրականության դրսևորման ու անարդարության միջև ուղղակի կապ: Ակնհայտ է նաև, որ հանրային-քաղաքական խոսույթի առավել ակտիվ դերակատարները անցյալում մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման ու անարդարության դրսևորումների հանդեպ հստակ դիրքորոշումը դարձնում են ապագայում իրականացվելիք քայլ արդարության վերականգնման և ապահովման ուղենիշով, որում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը առաջնային խնդիր է: Եվ սա դաշտ է բացում այս երկու սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների՝ որպես գաղափարների ու արժեքների սերտ փոխառնչման ու հարաբերման համար:

Ուշագրավ են նաև այս երկու արժեքներին՝ սոցիալական արդարությանն ու մարդու հիմնարար իրավունքներին հղելու հաճախականությունն ու խորությունը: Այդ առումով սիմպոտմատիկ են պաշտոնական փաստաթղթերը: Ընդ որում՝ վստահաբար կարելի է պնդել, որ *ա) պաշտոնական փաստաթղթերի լեզուն շաղախված է մարդու իրավունքների լեզվով, բ) մշակվող ու գործադրվելիք քաղաքականություններն էլ բնութագրվում են որպես իրավունքահենք*: Հետևաբար օրինաչափ է, որ «մարդու իրավունքներ», «մարդու իրավունքների պաշտպանություն կամ ապահովում» կամ «մարդու իրավունքների ոտնահարում» բառակապակցություններն առավել հաճախակի են կիրառվում վերջին շրջանում ՀՀ-ում ընդունված առանցքային փաստաթղթերում:

Պատկերը տրամագծորեն այլ է, երբ խոսքը սոցիալական արդարության մասին է: Պաշտոնական փաստաթղթերում «սոցիալական արդարություն» կամ «(ան)արդարություն» բառերի գործածությունը խիստ սակավ է: Դրանցում համեմատաբար հաճախ կարելի է հանդիպել «արդար» բառի կիրառությանը՝ «արդար ընտրություններ», «գործի արդար դատաքննության իրավունք»³¹, «արդար մրցակցություն», «պետական գնումների արդար և թափանցիկ համակարգ», «արդար միջավայր»³², «ապրանքների և ծառայությունների արդար բաշխում»³³:

Պաշտոնական խոսույթի պարագայում ազատական-ժողովրդավարական գաղափարաբանական շրջանակի տեսանկյունից կարծես ի հայտ է գալիս յուրօրինակ մասնատում. «արդարություն» բառը գործածվում է մարդու իրավունքների հետ սերտ հարաբերման մեջ, իսկ «սո-

³¹ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն», առցանց <http://e-rights.am/>, այց՝ 19.01.2020:

³² Տե՛ս «Կառավարության 2019–2023 թվականների ծրագիր», առցանց՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>, այց՝ 19.01.2020:

³³ «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ», առցանց՝ <https://www.e-draft.am/projects/1928/about>, այց՝ 25.01.2020:

ցիալական արդարությունը» կարծես ավելի շուտ հղում է (ան)հավասարությանը, (ան)հավասար հնարավորություններին հղացքին: Այդպիսով հղացական առումով տեսական շրջանակ հանդիսացող արդարության տեսությունը, որում մարդու հիմնարար իրավունքների իրացումը սոցիալական արդարության էական բաղադրիչն է, տրոհվում է: Թուլանում է մարդու հիմնարար իրավունքների իրացման և հարցի սոցիալ-տնտեսական կողմի միջև էական կապը, որի շեշտադրումը պակաս կարևոր չէ հետխորհրդային շրջանի աղքատության բազմաչափության խորքային գիտակցման համար թե՛ քաղաքականություն մշակողների ու իրականացնողների, թե՛ հանրության լայն շրջանակի կողմից:

Սակայն հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթը բացառապես պաշտոնական հողավորումներով պարփակված չէ: Դրանում, իհարկե, իրենց դերն ունեն կուսակցական, հանրային գործիչների, նաև փորձագիտական շրջանակների պնդումները: Այսպես՝ պարզվում է, որ անկախությունից ի վեր հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում մարդու հիմնարար իրավունքների և սոցիալական արդարության խոսույթները ծավալվել են գլխավորապես միմյանցից անջատ: Ընդ որում՝ առաջինն առավել զարգացած է, քան երկրորդը: Սոցիալական արդարության մասին պատկերացումները առավելապես մնում են աղոտ, լրդզված, վատ ռացիոնալացված ու ռեֆլեքսիայի չենթարկված, հիմնականում հուզականորեն ծանրաբեռնված, իսկ իրավունքի մասին գիտելիքը՝ չհամակարգված ու խիստ ձևական, որի հետևանքով այն մասամբ կորցրել իր ազդեցիկությունը³⁴: Սոցիալական արդարության թեման ժամանակ առ ժամանակ հանրային-քաղաքական խոսույթ են բերում առանձին իրադարձություններ: Այնինչ մարդու հիմնարար իրավունքների թեման շրջանառվում է առավել կանտոնավոր, և դրանում ակտիվորեն ներգրավված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, հանրային-քաղաքական ու պետական գործիչներ, անկախությունից ի վեր՝ հատկապես օրվա իշխանությունները: Միաժամանակ, արդարության հարցի մասին խոսում են հիմնականում կա՛մ նեղ ազգային ծիրում, կա՛մ սոցիալ-տնտեսական բաղադրիչի առնչությամբ: Սոցիալական արդարությունն ու մարդու հիմնարար իրավունքները և հատկապես դրանց փոխառնչությունը, այսինքն՝ հողավորումը, մնում են հայաստանյան հանրային փոքրամասնության դիրքորոշումը: Քանի որ այս թեման ակադեմիական, ռացիոնալ քննարկումներից հիմնականում դուրս է մնացել, ապա տեղը զբաղեցրել են ռազմահայրենասիրական, էթնիկ, ազգայնական թեմաները, միֆակա-

³⁴ Տե՛ս **Նաիրա Մկրտչյան**, «Մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում», առցանց <https://www.osf.am/wp-content/uploads/2020/07/Մարդու-հիմնարար-իրավունքների-հարաբերումն-սոցիալական-արդարությանը-հետհեղափոխական-Հայաստանի-հանրային-քաղաքական-խոսույթում.pdf>, այց 29.09.2021:

նացումներն ու կեղծարքները³⁵:

Հետաքրքիրն այն է, որ վերոհիշյալ բացահայտումները, միտումներն ու կողմերը գալիս հանգում են հանրային-քաղաքական խոսույթում կիրառվող լեզվի հարցին, որը հատկապես ցցուն է, երբ խոսքը մարդու (հիմնարար) իրավունքների մասին է: Հանրության լայն շերտերում իրավունքը որպես արժեք դեռ բավարար չափով և խորապես հաղորդակցված չէ: Հայաստանյան հանրության լայն շերտերը իրավունքից չեն խոսում, այլ արդարությունից ու անարդարությունից³⁶: Այդ առումով իրավունքի լեզուն, որով շաղախված է պաշտոնականը, ինչ-որ առումով օտար, խորթ ու պարտադրված լեզու է առօրեականում: Մրան հավելվում է մտավորական խոսույթների տկարությունը, որն ինքնին հանրային-քաղաքական բուն խոսույթի լինելության և գործառման լուրջ դժվարություններ է ստեղծում, հատկապես՝ մարդու հիմնարար իրավունքների և սոցիալական արդարության գաղափարների հողավորման առումով:

Եզրակացություն

Այսպիսով, թեև ԽՍՀՄ փլուզումից քիչ ժամանակ չի անցել, այնուամենայնիվ համակարգային բարեփոխումների, այսինքն՝ խորքային փոփոխությունների օրակարգը եղել և մնում է հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթի կենտրոնական թեմաներից մեկը, որի գաղափարաբանական շրջանակն առավելապես ազատական-ժողովրդավարական է: Ձ. Ռուխի արդարության՝ որպես անաչառության տեսության մեջ այդ շրջանակը ամուր հողավորում է սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների գաղափարները, որոնք ներկայացված են և առավել կամ պակաս չափով հաղորդակցված հայաստանյան հանրության շրջանում: Այդ տեսության դիտանկյունից՝ առնվազն վերջին շրջանի հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում վերոնշյալ քաղաքական արժեքներն ու գաղափարները իրենց փոխառնչության և հողավորման մեջ առավելապես մասնատված, տրոհված են: Ընդ որում՝ պաշտոնական լեզուն շաղախված է մարդու իրավունքների լեզվով և չափազանց քիչ է հիշատակում (սոցիալական) արդարությունը, մարդու հիմնարար իրավունքների մասին խոսույթն ավելի լավ է զարգացած, քան սոցիալական արդարության խոսույթը: Այնինչ առօրեական մակարդակում մարդիկ ավելի շուտ խոսում են (ան)արդարությունից, քան թե իրավունքից, որի մասին գիտելիքը խիստ ձևական է և պակաս ազդեցիկ: Իր հերթին բուն հանրային-քաղաքական խոսույթն է մասնատված ու հատվածական, որի խորքում բոլորի համար քիչ թե շատ միասնական ու հասկանալի լեզվի բացակայությունն է:

³⁵ Տե՛ս **Նաիրա Մկրտչյան**, նշվ. աշխ.:

³⁶ Տե՛ս նույն տեղը:

НАИРА МКРТЧЯН – Идеи социальной справедливости и основных прав человека в общественно-политическом дискурсе Армении. – Хотя после распада СССР прошло немало времени, повестка системных реформ, т.е. повестка глубоких изменений была и остается одной из центральных тем общественно-политического дискурса Армении, идеологический фрейм которого по большей части либерально-демократический. В теории справедливости как честности Дж. Роулза этот фрейм твердо артикулирует идеи социальной справедливости и основных прав человека, которые представлены и более или менее коммуницированы среди общественности в Армении. Если рассматривать с точки зрения этой теории, то, по крайней мере в последнее время, в общественно-политическом дискурсе Армении вышеназванные политические ценности и идеи в своей взаимосвязи и артикуляции в основном раздроблены, расщеплены. Причем, официальный язык промешан языком основных прав человека, а (социальная) справедливость упоминается чрезвычайно редко, дискурс об основных прав человека развит намного лучше, чем дискурс о социальной справедливости. Между тем, на обыденном уровне люди больше говорят о (не)справедливости, чем о праве, знание коего строго формально и не так влиятельно. В свою очередь, сам общественно-политический дискурс раздроблен и расщеплен, в силу отсутствия более или менее единого и понятного для всех языка.

Ключевые слова: *социальная справедливость, основные права человека, общественно-политический дискурс, глубинные изменения, идеологический фрейм, либеральная демократия, повестка системных реформ*

NAIRA MKRTCHYAN – The Ideas of Social Justice and Basic Human Rights in the Socio-Political Discourse of Armenia. – Although it has been quite a while since the collapse of the USSR, the agenda of systemic reforms, namely, the agenda of deep changes has been and still remains one of the central topics of socio-political discourse in Armenia, the ideological frame of which is mainly liberal-democratic. In J. Rawls's theory of justice as fairness, this frame strongly articulates the ideas of social justice and basic human rights. Viewed from the perspective of that theory, at least recently in the socio-political discourse of Armenia, the aforementioned political values and ideas are mainly split, divided in their interconnection and articulation. Moreover, the official language is kneaded with the language of basic human rights; the discourse of basic human rights is better developed than the discourse of social justice. Whereas people speak rather of (in)justice than right, knowledge of which is strongly formal and less influential. In its turn, the socio-political discourse itself is fragmented and split, at the origin of which is the absence of the more or less united and comprehensible language for all.

Key words: *social justice, basic human rights, socio-political discourse, deep changes, societal-political order (polity), ideological frame, liberal democracy, agenda of systemic reforms*